## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը և վարդապետութիւնը.—Տաճատ քահանայ Մարաղեան, Բագու 1898. գինը 1 ր.

— Յունաստանի անցեալից (պատմ. տեսութիւն). – Ե. Թոփչեան. Ս. Պետերբուրգ 1898. գինը 20 կ.

—L'Univers et sa formation. — N. Dagavarian, Constantinople 1898.

Տիկին Տ. Կոստանեանցի թարգմանութիւնները.

Ա. Կեանքի դպրոց.—Հոֆմանի. Թիֆլիս 1897. գինը 10 կ.

Բ. Զինուոր Յակոբ. գինը 7 կ.

Գ. Աստղէ դրամ. Հարուստը և աղքատը. Սպիտակ օձ.—Գրիմմ. գինը 7 կ.

Դ. Օնիկը և Մարգարիտը. Նապաստակը և Ոզնին. Գայլն ու մարդը. գինը 10 կ.

Ե. Մատանի. Թռչնիկ. Չար մտքով չէ. 1898. գինը 7 կ.

Զ. Յունաց ուսուցիչ Սոկրատէսը. գինը 20 կ.

Վերջին գրքոյկը Տիկնոջ 21-դ թարգմանութիւնն է, Բոլորը միասին կազմում են մի փոքրիկ մատենադարան, ըստ մեծի մասին փոքրիկ ընթերցողների համար, որոնց թիւը, ցանկալի է, շատ լինէր. Այդ գրքոյկներն, իրենց ընտիր բովանդակութեամբ և ընտիր լեզուով՝ ամենագեղեցիկ ընթերցանութեան նիւթ են մեր մանուկների համար, և իրենց գներով՝ ամենքին մատչելի.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

### ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ. ՄՈՍԿՈՒԱ.

Պետ. Խորհրդ. Դանիէլ Գաբրիէլեան Քանանեանի մրցանակի Բարձրագոյն կանոնադրութեան 7-րորդ յօդուածի հիման Լազարեան Ճեմարանի Մասնագիտական Դասարանների Խորհուրդը իւր սոյն Փետրուարի 7-ին կայացած նիստում վճռեց յայտարարել ի գիտութիւն մասնագէտների առաջիկայ երկու նիւթերը՝ էջէ.– մրցանակի համար՝ իւրաքանչիւրը 600 րուբլի.

Ա.—«Հաւաքումն և դասաւորութիւն Արաբացի մատենագիրների հաղորդած տեղեկութիւնների Հայաստանի և Հայերի մասին՝ մինչև ԺԴ. դարու վերջը՝ ներկայացրած նիւթերի քննական բացատրութեամբ հանդերձ։»

Բ.—«Նիւթեր ժամանակակից Հայերի սովորութեան, իրաւունքի կամ ազգային իրաւաբանական սովորոյթների»։

Շարադրութիւնները կարող են ներկայացուել Հայերէն կամ Ռուսերէն, Ֆրանսերէն կամ Գերմաներէն։

Լաւագոյն շարադրութիւնը յիշեալ իւրաքանչիւր նիւթերից մէկի մասին կը պարգևատրուի Խորհրդի կողմից վեց հարիւր (600) րուբլի մրցանակով։

Եթէ առաջին կամ երկրորդ նիւթի մասին ներկայացրած շարադրութիւններից երկուսը հաւասար արժանաւորութիւն ունենան, Խորհուրդը կարող է բաժանել մրցանակը երկուսի հեղինակների մէջ։

Շարադրութիւնները պէտք է ներկայացուեն ոչ ուշ քան 7-ն Օգոստոսի 1900թ.։

Վերատեսուչ Ճեմարանի Վս. Միլլէր.

Քարտուղար Խորհրդարանի Գ. Խալաթեանց.

15 Փետրուարի 1898 թ.

Մոսկուա.